Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
փետրվարի 25-ի N 238-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ, ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների (այսուհետ՝ հաստատություններ) ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբից առնվազն 6 ամիս առաջ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) հաստատություններից ստացած հայտերի հիման վրա, սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում համապատասխան ուսումնական տարվա ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերը և առկա ուսուցմամբ ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերի բաշխումը:

3. Ասպիրանտուրայում, դոկտորանտուրայում և հայցորդության համակարգում սույն կարգով չկարգավորվող հարաբերությունները կարող են կարգավորվել տվյալ հաստատության սահմանած կանոնակարգով:

V. ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅՈՒՆ

57. Հայցորդը մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան, իսկ բժշկական մասնագիտություններով՝ բժշկի որակավորում, կլինիկական ուղղվածությամբ բժշկական մասնագիտությունների դեպքում՝ բժիշկ-մասնագետի որակավորում ունեցող անձ է:

58. Հաստատություններում հայցորդությունն իրականացվում է վճարովի և անվճար հիմունքներով, տվյալ հաստատության սահմանած կարգով, որի տևողությունը չի գերազանցում 5 տարին:

59. Հայցորդ ձևակերպվելու համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը տրվում է հաստատության ղեկավարի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին).

2) հրատարակված գիտական աշխատությունների ցուցակը կամ ընտրած մասնագիտությունից գիտական ռեֆերատ.

3) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3 x 4 չափսի).

4) քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե դիմողն աշխատում է):

60. Հաստատության սահմանած կարգի համաձայն հայցորդը ձևակերպվում է հաստատության ղեկավարի հրամանով, և նրա հետ կնքվում է պայմանագիր:

61. Հայցորդի լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտային միավորի, որը բաղկացած է երկու փոխկապակցված մասերից՝ կրթական և հետազոտական:

62. Հայցորդը պետք է հանձնի ուսումնական ծրագրով (պլանով) նախատեսված քննությունը (քննությունները) և ստուգարքը (ստուգարքները) (այդ թվում՝ մասնագիտական քննությունը), կուտակի համապատասխան կրեդիտներ, ավարտի ատենախոսությունը և համապատասխան հաստատությունում անցկացնի ատենախոսության նախնական քննարկում:

63. Հայցորդը տարեկան մեկ անգամ, հաստատության սահմանած կարգով, ատեստավորվում է հաստատության ամբիոնի, բաժնի (սեկտոր, լաբորատորիա) կողմից:

64. Գիտական հետազոտություններ կատարելիս՝ հայցորդն օգտվում է հաստատության գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից, գործուղումների իրավունքից, հանրակացարանից և այլն:

65. Ատենախոսությունը չպաշտպանած հայցորդին, իր ցանկությամբ, անվճար տրվում է հաստատության կողմից սահմանված ձևի ակադեմիական տեղեկանք՝ հաստատության ղեկավարին հայցորդի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը ներկայացվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

66. Հաստատության ղեկավարը կարող է սահմանված կարգով կատարել հայցորդի գիտական ղեկավարի վարձատրությունը (տարեկան առնվազն 30 ժամ):

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Դ. Հարությունյան**